## ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԳՀԱՊՁԲ-2017/16-11-ԵՊԲՀ»

ք.Երևան « 16 » « դեկտեմբերի » 2017թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա.Ա.Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Ար.Մեդտեխնիկա» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Վ.Թորոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 22.900.000,00 /քսաներկու միլիոն ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

**Սույն պայմանագրի մասով Վաճառողը Ապրանքի մատակարարումը իրականացնում է համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի վերաբերյալ կողմերի միջև կկնքվի համապատասխան համաձայնագիր:**

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 2018 թվականի դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող N 1 չափաբաժնի ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում տեղադրման պահից հաշված 24 ամսից ոչ պակաս ժամանակահատվածը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

---

*Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

**Եթե պայմանագրի կնքելու օրվան հաջորդող 6 ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում, ապա պայմանագիրը լուծվում է:**

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 15 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ | «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ |
| ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2 | ՀՀ, ք.Երևան, Զաքյան 8 |
| «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ |
| հ/հ 11500166513800 | Հ/Հ 1930041595160100 |
| ՀՎՀՀ 01503448 | ՀՎՀՀ 02604367 |
| Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան | էլ. հասցեն՝ armedtechnicallc@gmail.com |
| | Հեռ. (010) 58 57 63 |
| | Տնօրեն՝ Վ.Թորոսյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
« 12 » « դեկտեմբերի » 2017թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2017/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| 1 | 33100000 | Հիվանդների կարդիոմոնիտորին գային համակարգ, VITAPIA 7000K | TRISMED Co.Ltd, Կորեա | Նայել ստորև կցված Հավելվածում | հատ | 11.450.000,00 | 22.900.000,00 | 2 | ք.Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 | 2 | Նախատեսվում է ձեռք բերել 2018թ. ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 10 օրացույցային օրվա ընթացքում |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | 22.900.000,00 | | | | |

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

**ԳՆՈՐԴ**

«Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2
«Արիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան

---

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Զաքյան 8
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930041595160100
ՀՎՀՀ 02604367
էլ. հասցեն՝ armedtechnicallc@gmail.com
Հեռ. (010) 58 57 63
Տնօրեն՝ Վ.Թորոսյան

---

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված

| Անվանում | Բաղադրիչ | Բաղադրիչի տեխնիկական բնութագիր | Բաղադրիչի քանակ |
|---|---|---|---|
| Հիվանդների կարդիոմոնի-տորինգային համակարգ | Հիվանդի կարդիոմոնիտոր | **Ընդհանուր դրույթներ՝** 12.1" բարձր պայծառության TFT LCD գունավոր դիսպլեյ<br>շարժական, ռացիոնալ, հարմար դիզայն<br>մեծ ցուցանիշերով էկրան<br>ԷՍԳ 7-lead ցուցադրումը 1 էկրանի վրա<br>480-ժամյա կամ ավել գրաֆիկական ու աղյուսակային գրանցում և տեղեկատվության պահպանում<br>համատեղելի և ինքնուրույն օգտագործվող 5-lead ԷԿԳ մալուխ<br>Ոչ ինվազիվ արյան ճնշաչափման (NIBP) երկակի գերճնշման պաշտպանություն<br>դեֆիբրիլյացիոն միջամտությունների, բարձր հաճախականության հոսանքների ժամանակ ապահովություն<br>աշխատանքի առանձնացված բուֆերային ռեժիմ<br>Ցանցային կարողությունները<br>3/5 Lead ԷՍԳ, RESP, SPO2, NIBP, TEMP<br>Հավելյալ հնարավոր պարամետրեր և կոնֆիգուրացիա<br>2-IBP, 2-TEMP, 12-lead ԷՍԳ, EtCO2<br>Մոնիտորինգի համակարգին միանալու հնարավորություն | 10 |
| | | **Հակա-էլեկտրոշոկային տեսակը՝** I դասի սարքավորումներ, ներքին հզորությամբ սարքավորումներ | |
| | | **EMC տեսակը՝** Դաս A | |
| | | **Հակա-էլեկտրոշոկային աստիճանը՝** ԷՍԳ (RESP), SpO2, NIBP, IBP, TEMP, CO2 CF | |
| | | **Մոնիտորի քաշը՝** 6կգ | |
| | | **Ջերմաստիճանը՝** Աշխատանքային՝ +5 - +40oC ներառող տիրույթ<br>Տեղափոխում և պահպանում՝ -20 - +60°C ներառող տիրույթ | |
| | | **Խոնավություն՝** Աշխատանքային՝ <80%<br>Տեղափոխում և պահպանում՝ <80% (չկոնդենսացվող) | |
| | | **Բարձրությունը ծովի մակարդակից՝** Աշխատանքային՝ -500-ից մինչև 4.600մ.<br>Տեղափոխում և պահպանում՝ -500 մինչև 13.000մ. | |
| | | **Էկրան՝** քան 12.1" գունավոր էկրան, TFT, LCD | |
| | | **Ազդանշանային համակարգ՝**<br>8 ալիքային ազդանշան<br>զգուշացնող ցուցիչ LCD-ի վրա<br>հզորության/էներգիայի ցուցիչ LCD-ի վրա<br>մարտկոցի լիցքավորման ցուցիչ<br>ոչ պակաս, քան 3 ազդանշանային ձայնային ռեժիմներ | |
| | | **Արտաքին դիսպլեյ՝** Ստանդարտ VGA կամ USB | |
| | | **ԷՍԳ արդյունքները՝** BNC | |
| | | **Ամպլիտուդ՝** 1mV | |
| | | **Իմպեդանս՝** 50Ω | |
| | | **Մեկ հապաղումը / ուշացումը՝** ≤20mS | |
| | | **Մարտկոց՝** վերալիցքավորվող 3.6A/Hr 7.4V Li մարտկոց: Աշխատանքային ժամանակը նորմալ օգտագործման դեպքում ամբողջական լիցքավորումից հետո ոչ պակաս, քան 120ր: Մարտկոցի լիցքաթափման առաջին ազդանշանից հետո սարքը աշխատանքային ժամանակը առնվազն 5 րոպե | |
| | | **Տպիչ** | |
| | | Տպիչի լայնությունը՝ 48մմ | |

| | | | |
|---|---|---|---|
| | | Թղթի արագությունը՝ 25/50 մմ/վ | |
| | | Ուղիների քանակը՝ 2 | |
| | | **Տվյալների պահպանում՝** | |
| | | Գրանցված տվյալների արտահանում՝ կարճ՝ ոչ պակաս, քան 1ժ, 1վրկ.<br>երկար՝ ոչ պակաս, քան 72ժ, 1ր. | |
| | | Գրանցված ահազանգման ազդանշանների վերանայում՝ 70 ահազանգի գրանցում բոլոր պարամետրերի համար և 8/16/32 վայրկյան ձևավորված ալիքների փոխանցման համար: | |
| | | **Ոչ ինվազիվ ճնշումը (NIBP)՝** Առնվազն 400 NIBP չափման տվյալներ | |
| | | **ԷՍԳ՝** | |
| | | **Արտածումների ռեժիմ** | |
| | | 1) 5Leads (R.N.F.N.C կամ RA, LA, LL, RL, V) | |
| | | 2) 3 Leads (R.N.F.N.C կամ RA, LA, LL) | |
| | | **Արտածումների ընտրություն** | |
| | | 1) I, II, III, avR, avL, avF, V | |
| | | 2) I, II, III | |
| | | **Ալիքի ձևը** | |
| | | 1) 2 ուղի | |
| | | 2) 1 ուղի | |
| | | **Ուժեղացում՝** x2.5mm/mV, x5.0mm/mV, x10mm/mV, x20mm/mV | |
| | | **Սրտի զարկերի չափման և ազդանշանային տիրույթը՝** մեծահասակների համար առնվազն՝ 15-300զ/ր<br>նորածինների/երեխաների համար առնվազն՝ 15-350զ/ր | |
| | | **Հստակությունը՝** ±1% կամ ±1զ/ր | |
| | | **Զգայունությունը՝** >200uVP-P | |
| | | **Դիֆերենցիալ մուտքային իմպեդանս՝** ~ 5MΩ | |
| | | **CMRR՝** Մոնիտոր >105dB<br>Գործողություն >105dB<br>Ախտորոշում >85dB | |
| | | **Էլեկտրոդների չեզոքացման պոտենցիալ՝** ±300mV | |
| | | **Միջին արտահոսք՝** <10uA | |
| | | **Բազային վերականգնում՝** <3վրկ. դեֆիբրիլյացիայից հետո | |
| | | **ԷՍԳ ազդանշանային սահմանները՝** ±8mV(Vp-P) | |
| | | **Թողունակությունը՝** 1 ~ 20Hz (+0.4dB-3dB)<br>0.5Hz ~ 40Hz (+0.4dB-3dB)<br>0.05Hz ~ 75Hz (+0.4dB-3dB)<br>76Hz~ 150Hz (+0.4dB-3dB) | |
| | | **Ստուգաճշտման ազդանշան՝** 1mV (Vp-P) ±5% հստակություն | |
| | | **ST սեգմենտի մոնիտորինգի չափման և ազդանշանային տիրույթը՝** -2.0 ~ + 2.0mV | |
| | | **ARR հայտնաբերման տեսակը՝** ASYSTOLE, VFIBNTAC, BIGEMINY, TRIGEMINY, R ON T, VT>2, PVC, TACHY, BRADY, MISSED BEATS, PNP, PNC | |
| | | **Ազդանշան՝** առկայություն | |
| | | **Վերանայման ֆունկցիա՝** առկայուն | |
| | | **Շնչառություն՝** | |
| | | **Մեթոդ՝** R-F (RA-LL) միջև իմպեդանս | |
| | | **Դիֆերենցիալ մուտքային իմպեդանս՝** >2.5 MΩ | |
| | | **Իմպեդանսի չափման տիրույթ՝** 0.3 ~ 5.0Ω | |
| | | **Հիմնական իմպեդանսի տիրույթ՝** 0.1 ~ 2.5 kΩ | |
| | | **Թողունակություն՝** 0.3 ~ 2.5 Hz | |
| | | **Շնչառության չափման տիրույթ՝** 0 ~ 120 rpm | |

| | | | |
|---|---|---|---|
| | | Չափման և ազդանշանային տիրույթը՝ Նեո/մանկ. 0 ~ 150rpm<br>Չափման քայլը՝ 1rpm<br>հստակություն՝ ±2rpm<br>Ապնոէի ահազանգ՝ 10 ~ 40S | |
| | | NIBP | |
| | | Մեթոդ՝ Օսցիլոմետրիկ | |
| | | Ռեժիմ՝ Manual, Auto, STAT | |
| | | Չափման ինտերվալը AUTO ռեժիմում՝<br>1,2,3,4,5,10,15,30,60,90,120,180,240,480,760 Min | |
| | | Չափման ինտերվալը ստատիկ ռեժիմում՝ 5Min | |
| | | Սրտի զարկերի հաճախականության և ահազանգման տիրույթը՝ 40 ~ 240bpm | |
| | | Ահազանգի տեսակը՝ SYS, DIA, MEAN | |
| | | Ահազանգի ձևը՝ մեծահասակների ռեժիմում՝<br>SYS: 40 ~270mmHg, DIA: 10~215mmHg, MEAN: 20~235mmHg<br>երեխաների ռեժիմում՝<br>SYS: 40 ~270mmHg, DIA: 10~150mmHg, MEAN: 20~165mmHg<br>նեոնատալ ռեժիմում՝<br>SYS: 40 ~135mmHg, DIA: 10~100mmHg, MEAN: 20~110mmHg | |
| | | Չափման քայլը՝ 1mmHg | |
| | | Առավելագույն սխալը՝ ±5mmHg | |
| | | Առավելագույն շեղումը՝ ±8mmHg | |
| | | Գերճնշման պաշտպանության՝<br>մեծահասակների ռեժիմում՝ 297± 3mmHg<br>երեխաների ռեժիմում՝ 240 ±3mmHg<br>նեոնատալ ռեժիմում՝ 147 ±3mmHg | |
| | | SpO2՝ | |
| | | Չափման տիրույթը՝ 0 ~ 100% | |
| | | Ահազանգի տիրույթը՝ 0 ~ 100% ծրագրավորման հնարավորությամբ | |
| | | Չափման քայլը՝ 1% | |
| | | Հստակություն՝ 70~100%±2%<br>0~69% ոչ սպեցիֆիկ | |
| | | Ակտուալիզացիայի ինտերվալը՝ մոտ 1վրկ | |
| | | Ազդանշանային ուշացումը՝ 10 վրկ | |
| | | Սրտի զարկերի հաճախականության և ահազանգման տիրույթը՝ 0 ~ 250bpm | |
| | | Սրտի զարկերի չափման քայլը՝ 1bpm | |
| | | Հստակություն՝ ± 2 bpm | |
| | | Ջերմաստիճան՝ | |
| | | Ուղի ՝2 | |
| | | Չափման և ահազանգման տիրույթը՝ 0~50°C | |
| | | Ջերմաստիճանի չափման քայլը՝ 0.1°C | |
| | | Հստակություն՝ ±0.1°C | |
| | | Ակտուալիզացիայի ինտերվալը՝ մոտ 1վրկ. | |
| | | Ժամանակի միջինացված հաստատունը՝ <10վրկ. | |
| | | IBP (Optional)՝ | |
| | | Ուղի ՝ 2 | |
| | | Մակնշում՝ ART, PA0000CVP, RAP, LAP, ICP, P1, P2 | |
| | | Չափման և ահազանգման տիրույթը՝<br>ART: -50~350mmHg<br>PA: -6~120mmHg | |
| | | CVP/RAP/LAP/ICP՝ -10~40mmHg | |
| | | P1/P2՝ -10~300mmHg | |
| | | Սենսորի զգայունությունը՝ 5uV/V/mmHg | |
| | | Իմպեդանս՝ 300~3000Ω | |

| | | | |
|---|---|---|---|
| | | **Չափման քայլը՝** 1mmHg | |
| | | **Հստակություն՝** ±2% կամ 1mm | |
| | | **Ակտուալիզացիայի ինտերվալը՝ մոտ 1վրկ.** | |
| | | **EtCO2 (Optional)՝** | |
| | | **Մեթոդ՝** ինֆրակարմիր ճառագայթների կլանման մեթոդ | |
| | | **Չափման ռեժիմ՝** Հիմնական հոսք կամ Կողմնային հոսքի (ըստ ընտրության) | |
| | | **Sidestream ռեժիմում միավոր գազի հոսքի արագությունը՝** 50ml/min | |
| | | **Չափման տիրույթը՝** Ոչ պակաս, քան՝<br>CO2: 0~150mmHg<br>INSCO2: 0~150mmHg<br>AwRR: 0~150rpm | |
| | | **Չափման քայլը՝** CO2: 0.1mmHg(0~69mmHg), 0.25mmHg(70~150mmHg)<br>INSCO2: 0.1mmHg(0~69mmHg), 0.25mmHg(70~150mmHg) | |
| | | **Հստակությունը՝** ±2mmHg, 0~40mmHg<br>±5% արտացոլվածից 41~70mmHg<br>±8% արտացոլվածից 71~100mmHg<br>±10% արտացոլվածից 101~150mmHg | |
| | | **AwRR՝** ±1rpm | |
| | | **Կիրառումը՝** | |
| | | **Հիմնական հոսքի ռեժիմի դեպքում՝** Կապնոգրամման արտացոլվում է ոչ ավել քան 15վրկ. 25 °C ջերմաստիճանային պայմաններում, ամբողջական սպեցիֆիկացիաները 2 րոպեի ընթացքում | |
| | | **Կողմնային հոսքի ռեժիմի դեպքում՝** Կապնոգրամման արտացոլվում է 15 վրկ. 25 °C ջերմաստիճանային պայմաններում, ամբողջական սպեցիֆիկացիաները 2 րոպեի ընթացքում | |
| | | **Հիմնական հոսքի բարձրացման ժամանակը՝** 60մ/վ մեծահասակների բազմակի օգտագործվող կամ մեկանգամյա օգտագործման օդի հոսքի ադապտերով | |
| | | **Կողմնային հոսքի ուշացման ժամանակը՝** 2~3վրկ. | |
| | | **Ազդանշանային տիրույթը՝**<br>CO2: 0~150mmHg<br>INSCO2: 0~150mmHg<br>AwRR: 2~150bpm | |
| | | **Շնչարգելության ազդանշանի ուշացումը՝** Ոչ ավել, քան՝<br>AwRR: 10~60վրկ | |
| | | **Սերտիֆիկացիա և միջազգային ստանդարտներին համապատասխանություն՝** CE Mark(Device), ISO 13485 (manufacturer) | |
| | | **Երաշխիք, մոնտաժում, ուսուցում՝** Մոնտաժման և տեղադրման աշխատանքների կատարում, սարքերի հետ աշխատող մասնագետների ուսուցում, երաշխիքային սպասարկման ժամկետը 2 տարի (չի վերաբերվում հարակից պարագաներին): | |
| | Համակարգիչ | Առնվազն Core to Duo (Dual Core) պրոցեսսոր, Original Windows 7 օպերացիոն համակարգ, 21" մոնիտոր, պարագաներ (մկնիկ, ստեղնաշար): | 1 |
| | Անխափան սնուցման սարք | **Ելքային՝** | 1 |
| | | **Ելքային հզորությունը՝** 600Վտ / 1000ՎԱ | |
| | | **Մաքսիմալ կոնֆիգուրացվող հզորությունը՝** 600Վտ / 1000ՎԱ | |
| | | **Նոմինալ ելքային լարումը՝** 230Վ | |
| | | **Ելքային լարման շեղումը՝** ամբողջական ծանրաբեռնվածության 5%-ը | |

| | | | |
|---|---|---|---|
| | | **Ելքային հաճախականություն (համապատասխանեցվում է բաշխման ցանցին)՝** 50-60Hz, +/- 3Hz | |
| | | **Տոպոլոգիա՝** ինտերակտիվ գծային | |
| | | **Ալիքային տեսակը՝** սինուսոիդ | |
| | | **Ելքային միակցիչ՝** IEC 320 C13, IEC Jumpers | |
| | | **Մուտքային՝** | |
| | | **Նոմինալ մուտքային լարումը՝** 230Վ | |
| | | **Մուտքային հաճախականությունը՝** 50/60 +/- 3Hz (auto sensing) | |
| | | **Մուտքային միակցիչներ՝** IEC 320 C14 | |
| | | **Մուտքային լարման տիրույթը գլխավոր օպերատորների համար՝** Ոչ պակաս, քան 180 - 285Վ | |
| | | **Մարտկոցներ ու աշխատանքային ժամանակը՝** անվճար սպասարկմամբ հերմետիկ փակված Lead-Acid մարտկոց՝ կախույթային էլեկտրոլիտներով | |
| | | **Վերալիցքավորման միջին ժամանակը՝** 3 ժամ | |
| | | **Էներգիայի ծախսը / արդյունավետությունը** | |
| | | **Լիցք՝** 25% 50% 75% 100% | |
| | | **Արդյունավետություն՝** 93.5% 96.2% 96.9% 97.2% | |
| | | **Կապ և կառավարում** | |
| | | **Ինտերֆեյս Port (s)՝** USB | |
| | | **Ղեկավարման վահանակ՝** բազմաֆունկցիոնալ LCD ստատուս և ղեկավարման կոնսոլով | |
| | | **Զայնային ազդանշան՝** մարտկոցի ցածր լիցքավորման և բարձր ծանրաբեռնվածության ազդանշաններ | |
| | | **Էներգետիկ տատանումների գնահատումը՝** 455Ջ | |
| | | **Զտումը՝** ամբողջ ընթացում աղմուկի բազմաբևեռ ֆիլտրումը: 0.3% IEEE գերլարման պահերի սահմանափակում; առանց ժամանակային ուշացման լարում | |
| | | **Ֆիզիկական բնութագրեր՝** | |
| | | **Բարձրությունը՝** 215մմ | |
| | | **Լայնությունը՝** 175մմ | |
| | | **Խորությունը՝** 440մմ | |
| | | **Մաքուր քաշը՝** 17.5կգ | |
| | | **Գույնը՝** սև | |
| | | **Աշխատանքային միջավայրի ջերմաստիճանը՝** 0-40°C | |
| | | **Աշխատանքային միջավայրի խոնավությունը՝** 0-95% | |
| | | **Աշխատանքային միջավայրի բարձրությունը՝** 0-3000մ | |
| | | **Պահպանման միջավայրի ջերմաստիճանը՝** -15 - +45 °C | |
| | | **Պահպանման միջավայրի խոնավությունը՝** 0 - 95% | |
| | | **Պահպանման միջավայրի բարձրությունը՝** 0-15000 մ | |
| | | **Լսելի աղմուկի ուժգնությունը սարքի մակերեսից 1մ հեռավորության վրա՝** 41.00դԲԱ | |
| | | **Սերտիֆիկացիան և համապատասխանությունը միջազգային ստանդարտներին՝** CE, Gost, VDE | |
| | Հիվանդների կարդիոմոնիտորինգային համակարգի ծրագրային ապահովման փաթեթ | Համակարգչային ծրագիր, որը հնարավորություն է տալիս մինչև 64 հիվանդի կարդիոմոնիտորի համար ստեղծել ընդհանուր ցանց՝ տվյալների միաժամանակյա մոնիտորինգի համար:<br>Տվյալների արխիվացիայի հնարավորություն, ստացված արդյունքների մշակման և վերլուծման համար հարմար ծրագրային հնարավորություններ: | 1 |

1. Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:
2. Մասնակցի առաջարկի մեջ ներառված է գործարանային երաշխիքային ժամկետը տեղադրման պահից 12 ամսից ոչ պակաս:
3. Մասնակցի առաջարկի մեջ ներառված է մոնտաժը, կարգավորումները, տեխնիկական և բժշկական անձնակազմին սարքի օգտագործման եղանակներին ծանոթացնելը, երաշխիքային սպասարկումը տեղադրման պահից 24 ամսից ոչ պակաս:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ | «Ար.Մեդտեխնիկա» ՍՊԸ |
| ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2 | ՀՀ, ք.Երևան, Զաքյան 8 |
| «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ | «Կոնվերս Բանկ» ՓԲԸ |
| հ/հ 11500166513800 | Հ/Հ 1930041595160100 |
| ՀՎՀՀ 01503448 | ՀՎՀՀ 02604367 |
| Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան | էլ. հասցեն՝ armedtechnicallc@gmail.com |
| | Հեռ. (010) 58 57 63 |
| | Տնօրեն՝ Վ.Գորոսյան |
| ---------- | ---------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 3
«  » «  » 2017թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2017/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«  » «  » 20  թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20  թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 3.1
«  » «  » 2017թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2017/16-11-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը  Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20  թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը  պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն